

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 96

**Նոր ուխտը** – Անցեալ մի քանի դասերում մենք սերտել ենք այն ուխտերի մանրամասնութիւնները որ Աստուած հաստատեց Նոյի, Աբրահամի, Մովսէսի ու Դաւիթի հետ, եւ այժմ գալիս ենք սրանցից ամենամեծին՝ Սուրբ Գրքում ճանաչած որպէս Նոր Ուխտը: Առաջին անգամն որ այս ուխտը յիշուում է Երեմիա 31ում է: Նոր Կտակարանում Յիսուս Քրիստոսը խօսում է այս ուխտի մասին Ղուկաս 22ում՝ վերջին ընթրիքի ընթացքում, որն Պօղոսը վկայակոչում է Ա. Կորնթացիս 11ում: Նա յետագայում խօսում է այս ուխտի մասին Բ. Կորնթացիս 3ում: Բայց այս թեմայի ամենախոր բացատրութիւնը գտնում ենք Եբրայեցիս գրքի հեղինակից:

Որպէսզի աւելի լաւ հասկանալ այս «նոր ուխտի» գաղափարը, հարկ է որ մենք նախ նկատի առնենք Երեմիա գրքի պատմական ենթահողը: Երեմիան ծառայեց որպէս Աստուծոյ մարգարէ հարաւային թագաւորութեան՝ Յուդային, աւելի քան քառասուն տարիների ընթացքում: Յուդայի հոգեւոր դրութիւնը կարելի է բացատրել որպէս հոգեւոր շնութեան (Երեմիա 3:8,9) ու կրկնակի ուխտագանցութեան վիճակ (համարներ 11:10, 22:9): Մարգարէն ապաշխարութեան կոչեց ապստամբ ժողովրդին՝ իրենց կռապաշտութիւնից ու ետ դառնալ Աստուծուն: Նա հռչակեց Աստուծոյ դատաստանի վերահասութիւնը՝ Բաբելոնական յարձակման կերպով եւ ապա ժողովրդի վերջնական աքսորումը երկրից: Ուստի ժողովուրդը գտնուում էին վախի ու նեղութեան վիճակում:

Եւ ուրեմն այսպէս պարագաների միջին էր որ մարգարէն յայտարարեց Աստուծոյ վերահաստատման պատգամը (Երեմիա 30-33): Երեմիան մատակարարում էր սփոփանք դրանց որոնք արդէն գերութեան էին մատնել ու քաջալերում էր դրանց որոնք ակնկալում էին մահուան կամ աքսորման գալիք սպառնալիքը: Երեմիա 31:31-34ում կարդում ենք Աստուծոյ նոր ուխտի հաստատման մեծ խոստումը, ասելով դրանց թէ աքսորումը չ'պիտի լինէր անվերջ, ու Նա պիտի կատարէր մի նոր գործ դրանց մէջ ու փրկէր դրանց:

Երեմիայի մարգարէութիւնը սկսում է, «Ահա օրեր են գալիս» բառերով, նշելով մի ապագայ ժամանակ երբ Աստուած պիտի հաստատէր այս նոր ուխտը Իր ժողովրդի հետ: Լսելով այս խոստումները, շատեր պիտի համարէին դրանց որպէսզի ազգային Իսրայելի վերաբերեալ ու նրա գերութիւնից վերադարձը: Ուրիշներ այժմ նկատի են առնում այս խոստումները որպէսզի լինելով ամբողջովին ապագայում, ակնարկելով Քրիստոսի վերադարձը ու մի հազարամեայ թագաւորութեան հաստատումը երկրի վրայ: Բայց շնորհակալութեամբ մենք չենք մնացել անորոշ վիճակում, քանի որ գտնում ենք Նոր Կտակարանում այս հատուածի առաքելական մեկնաբանութիւն, այդպէս որ Եբրայեցիս գրքի հեղինակը բացատրում է այս հատուածը Եբրայեցիս 8ում: Ուրեմն նոր ուխտի գաղափարի ուղիղ հասկանալու ամենալաւ ձեւը պիտի լինի դրան ըմբռնել այդպէս որ Եբրայեցիս գիրքն է բացատրում:

Նամակի նախնական ստացողները Հրէայներ էին որոնք Քրիստոսին էին դարձել: Դրանք հալածում էին կրել երբ նախ Քրիստոսին էին եկել, ու աւելի տառապանքի տակ էին որպէս իրենց Քրիստոնէական կեանքի բաժին: Ամենայն հաւանականութեամբ այս Հրէայ Քրիստոնէաները մերժուած եւ ուրացած էին իրենց ընտանիքներից, համայնքից ու կրօնային առաջնորդներից. եւ միանալով այդ «Քրիստոնէական աղանդին» սեպտում էին որպէս ամօթ ու անպատուութիւն բերողներ իրենց Աստուծուն, կրօնին ու աւանդութեան: Դրանք ահագին ճնշման տակ էին, փորձելով վերադառնալ իրենց հին աւանդութեան ու արարողութիւններին:

Հեղինակը գրում էր այս Եբրայեցիներին, քաջալերելով դրանց որպէսզի յարատեւել ճնշման տակ, յորդորելով դրանց որ շարունակել հաւատքի մէջ, ուժգնութեամբ ասելով թէ չկար որեւէ բան դրանց համար որ ետ վերադառնալ, որովհետեւ այդպէս մի դարձ կործանարար պիտի լինէր, քանի որ հինը կատարել էր Քրիստոսում: Հեղինակը մատակարարում է մի համեմատութիւն Յիսուսի ու Հին Կտակարանի որոշ բաների միջեւ, ընդգծելով Քրիստոսի բացարձակ գերագանցութիւնը հրեշտակների վրայ, Մովսէսի վրայ, Ահարոնեան քահանայութեան վրայ, անասունների զոհերի վրայ եւ այլն:

Եւ այս հակադրութիւնների միջին է որ հեղինակը խօսում է Նոր Ուխտի նիւթի առթիւ, բացատրելով դրան որպէս Հին Ուխտից աւելի լաւ, որն նա ասում է անթերի չէր, անպակաս չէր, որն «հնամուս է եւ ծերանում, մօտ է ապականութեան (անհետանալու)» (համարներ 8:6, 7, 13): Այս համեմատութիւնների պատճառով մի շարք հարցումներ են ծագում, ինչպէս «Ի՞նչ է հին ուխտ արտայայտութեան նշանակութիւնը: Արդե՞օք կար մի խնդիր հին ուխտի հետ: Արդե՞օք Աստուած կնքեց մի թերի ուխտ որն ձախողեց կատարելու Իր նախնական նպատակը: Արդե՞օք Աստուած ստիպւած էր հաստատելու մի ուրիշ ծրագիր: Ե՞րբ է սկսում նոր ուխտը: Ի՞նչ իմաստով է նոր ուխտը աւելի լաւ հին ուխտից, աւելի լաւ խոստումներով: Մի՞թէ հաւատացեալներ Հին Կտակարանում չ'վայելեցին հենց նոյն օրհնութիւնները:» Սերտելով թէ Երեմիա եւ թէ Եբրայեցիս գրքերի պատմական ենթահողը, յաջորդ դասում կ'սկսենք ուսումնասիրել նոր ուխտի մանրամասնութիւնները, եւ կ'հայթայթենք այս ու նման հարցումների պատասխաններ: